



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ**

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2009 – 2013ԹԹ.
ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ**

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար՝ Ա. Ժ. Տիտանյանը
Հաստատեց համայնքի ավագանին

2009 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ինչ է քառամյա ծրագիրը-----	3
2. Համայնքի իրավիճակի գնահատում-----	4
3. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները-----	7
4. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում-----	9
5. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և Կանխատեսում-----	12

1. Ինչ է քառամյա ծրագիրը

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից է, որը մշակվել է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, հաստատվել համայնքի ավագանու կողմից: Այն ձևավորվել է համայնքի ղեկավարի նախընտրական ծրագրային դրույթների, համայնքի հնարավորությունների ու ներուժի գնահատման, կառավարության և միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների կողմից սպասվելիք ծրագրերի, տեղական հարկերից և տուրքերից գոյացող գումարների նախնական բաշխումների, համայնքից դուրս գտնվող օձունցիների կողմից նախատեսվող օգնությունների նպատակային օգտագործման հիման վրա:

Քառամյա սույն ծրագիրը իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի հստակ իրականացումը:

2. Համայնքի իրավիճակի գնահատում:

Օձուն համայնքը հանրապետության խոշոր գյուղերից է: Գտնվում է Երևանից 170 կմ, մարզկենտրոնից 50 կմ հեռավորության վրա՝ ՀՀ հյուսիսային մասում: Համայնքի մակերեսը 5.2 քառակուսի կմ է: Համայնքը գտնվում է Լոռու մարզի վարչական տարածքի մեջ: Օձուն համայնքի վարչական տարածքի մեջ է մտնում Ամոջ գյուղը: Օձունը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, աչքի է ընկնում պատմական և ճարտարապետական հուշարձանների առատությամբ. IV դարում կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին, V դարում կառուցված Ծիրանավոր Ծաղկավանք, VII դարում կառուցված Հռոմայրի վանական համալիրը, ինչպես նաև գյուղի տարբեր վայրերում կառուցված և տեղադրված բազմաթիվ խաչքարեր և մատուռներ վկայում են այդ մասին: Օձունն աչքի է ընկնում բարենպաստ մեղմ կլիմայով, որը պայմանավորված է նրա տարածքի մակերևույթի համեմատաբար ոչ մեծ բարձրությամբ՝ 1000 – 1100 մ ծովի մակարդակից: Գյուղի արևմտյան մասը անտառապատ է, որը էներգետիկ ձգնաժամի տարիներին խիստ տուժել է ապօրինի ծառահատումների պատճառով: Օձուն համայնքի բնակչության թիվը 5635 մարդ է, որից տղամարդ՝ 2936, կին՝ 2699: Բնակչության մեծ մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Օձուն համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 4153 հա, որից վարելահող՝ 1277 հա, խոտհարք՝ 339 հա, արոտավայր՝ 2369 հա: Օձուն համայնքում հաշվառված են 1544 գյուղացիական տնտեսություններ, որոնց սեփականաշնորհվել է 1111 հա վարելահող, 233 հա խոտհարք: Գյուղացիական տնտեսությունները մշակում են ցորեն, կարտոֆիլ, եգիպտացորեն: 2008թ. հնձվել է 200 հա ցորեն՝ 1 հա միջին բերքատվությունը 11 g, հավաքվել է 40 հա կորտոֆիլ՝ միջին բերքատվությունը 1 հա՝ 150 g, 100 հա եգիպտացորեն՝ միջին բերքատվությունը 1 հա՝ 10 g չոր հատիկ, հավաքվել է 28 հա բանջարեղեն՝ 1 հա միջին բերքատվությունը 100 g, կուտակվել է 20.000 g խոտ: Գյուղում զբաղվում են նաև անասնապահությամբ: Առ 01. 01.

2009թ. առկա են խոշոր եղջերավոր անասուններ՝ 1466 գլուխ, որից կով՝ 709, խոզ՝ 69, ոչխար՝ 140 գլուխ: 1 կովի միջին կաթնատվությունը 1800 – 2000 լիտր: Գյուղի ասֆալտապատ ճանապարհների տեսակարար կշիռը 4 – 5 % է, գազաֆիկացված տների տեսակարար կշիռը՝ 60 %, խմելու ջուր ունեցող տների՝ 60%, ընդհանուր հողատեսքերի 40 % - ը ոռոգվում են, հեռախոսակապ ունեցող ընտանիքների տեսակար կշիռը՝ 40 %: Գյուղում հայտնաբերված չեն օգտակար հանածոներ: Գործում են չորս մանր արտադրական ձեռնարկություններ՝ մեկ հացի փուռ, երեք քարի արտադրամաս: Ծառայություններից գործում է՝ Հայ փոստը, Էլցանցը, Հայրուսգագարտը: Կան քսանինը խանութ – կրպակներ: Համայնքային ենթակայության տակ կա գործող երկու մանկապարտեզ, մեկ արվեստի դպրոց, մեկ մշակույթի տուն, երկու գրադարան, իսկ պետական սեփականություն հանդիսացող՝ կրթական երկու դպրոց, առողջապահական մեկ ամբուլատորիա: Գործում է ԶՕԸ (ջրօգտագործողների ընկերություն) և մեկ հանգստյան տուն: Մոտ հարյուր օձունցիներ մինչ այժմ աշխատում էին Ալավերդու “Արմենիա Քափր Փրոգրամ” ՓԲ ընկերությունում, սակայն համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով օր օրի աշխատողների թիվը կրճատվում է: Գյուղում և տարածաշրջանում չկան այլ աշխատատեղեր: Օձունցիների մի մասը գարնան գալու հետ մեկնում է արտագնա աշխատանքի, աշնան վերջերին վերադառնում: 2009թ. կպակասի նաև արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Տարեցտարի պակասում է նաև հող մշակողների թիվը, քանի որ այս բնագավառում կան մի շարք խնդիրներ: Նախ գյուղում չկա համապատասխան տեխնիկա. նախկինում եղածը կամ վաճառվել է, կամ դարձել ոչ պիտանի, նոր տեխնիկա ընդհանրապես չկա: Բացի այդ կա նաև վառելիքի, սերմացուի ձեռքբերման խնդիր: Իսկ այն օձունցիները, ովքեր կարողանում են հայթայթել վառելիք և սերմացու և

մշակում են հողը, նրանց համար էլ առաջ է գալիս
բնամթերքն իրացնելու խնդիր:

1. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով, ինչպես նաև ներգրավելով տարբեր ֆինանսական միջոցներ՝ հետևողականորեն և տարեցտարի բարելավել համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական, մշակութային և հոգևոր պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ, լուսավոր ու բարեկեցիկ բնակավայր:

Վերը նշված բարեփոխումներով նախատեսվում է իրականացնել ամենամյա հետևյալ ծրագրերը.

1. զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը
2. կազմակերպել կանոնակարգված աղբահանություն
3. իրականացնել ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում
4. ճանապարհամերձ առուների մաքրում և վերականգնում
5. փողոցների լուսավորություն
6. սելավատարների մաքրում
7. համայնք ներկրել որակյալ սերմացու և գյուղատնտեսական տեխնիկա
8. կանոնակարգել խոտհարքների և արոտավայրերի հասարակական օգտագործումը՝ արգելելով անասունների՝ ժամանակից շուտ մուտքը խոտհարքը
9. բնական և այլ աղետների դեպքում օգնությունների բախշումը կատարել՝ հաշվի առնելով համայնքի հասարակական կարծիքը
10. երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակության բարձրացման նպատակով վերականգնել Հաղթանակի օրվան նվիրված տոնակատարությունները, կազմակերպել այցելություններ Հայրենական Մեծ պատերազմում զոհված օձունցիների հուշարձանին, հարգանքի տուրք մատուցել նաև արցախյան հերոսամարտում ընկած օձունցիների հիշատակին
11. աշխուժացնել գյուղի մշակութային կյանքը. օգտագործելով Մշակույթի տան հնարավորությունները՝ բացել մշակութային

տարբեր խմբակներ՝ ապահովելով մատաղ սերնդի բազմակողմանի զարգացվածությունը

12. կոնկրետ քայլեր ձեռնարկել գյուղի մարզական կյանքի աշխուժացման և երիտասարդության ժամանցի իմաստալից կազմակերպման ուղղությամբ

13. խմելու ջրի ներքին ցանցերի վերականգնման – վերանորոգման աշխատանքներ

4. Ըստ առանձին բնագավառների՝ առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Համայնքի հիմնախնդիրները

1. Սպորտ – համալիրի կառուցում
2. Նախակրթարանների վերանորոգում
3. Դպրոցների մարզադահլիճների և մարզահրապարակների վերանորոգում, մարզագույքի ձեռքբերում
4. Փողոցների ասֆալտապատում
5. Գյուղմթերքների վերամշակման արտադրամասերի հիմնում
6. Ոռոգման ցանցերի վերականգնում, ‘Եզնանիստ’ կոչվող վարելահողերի ջրամատակարարման ապահովում
7. Գյուղտեխնիկայի ձեռքբերում

1. Սպորտ – համալիրի կառուցում:

Համայնքի մարզական կյանքի աշխուժացման և երիտասարդության ֆիզիկական պատրաստականության բարձրացման համար համայնքին անհրաժեշտ է սպորտ – համալիրի կառուցում: Համայնքում կա միայն մեկ ֆուտբոլի մարզադաշտ, ինչն էլ չի համապատասխանում պահանջվող չափանիշներին (որակագրված է): Այդ պատճառով անգամ ներհանրապետական մրցումներն են արգելված: Անհրաժեշտ է կառուցել ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի մարզադաշտեր, մարզադահլիճներ, շախմատի դպրոց: Ծրագիրն իրականացնելու համար նախնական հաշվարկներով անհրաժեշտ է 300 (երեք հարյուր) մլն դրամ գումար:

2. Նախակրթարանների վերանորոգում:

Համայնքում կա երկու մանկապարտեզ: Թիվ 3 մանկապարտեզը գտնվում է խիստ անբարեկարգ ու անխնամ վիճակում: Առաջնային հարց է նշված մանկապարտեզի հիմնանորոգումը սկսած տանիքից մինչև պատերի ամրացում, կոսմետիկ վերանորոգում, դռների և լուսամուտների փոխում: Թիվ 2 մանկապարտեզը նույնպես կարիք

ունի վերանորոգման: Անհրաժեշտ է կատարել գոնե մասնակի վերանորոգում: Երկու նախակրթարաններում եղած գույքը արդեն ունի քսան տարվա վաղեմություն, երբևէ չի նորացվել: Նախատեսվում է նաև ձեռք բերել համապատասխան գույք: Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի 50 (հիսուն) մլն դրամ:

3. Դպրոցների մարզադահլիճների և մարզահրապարակների վերանորոգում, մարզագույքի ձեռքբերում:

Համայնքում կա երկու դպրոց: Դպրոցներից երկուսն էլ վերանորոգված են և գտնվում են բարվոք վիճակում: Այլ է դպրոցների մարզադահլիճների և մարզահրապարակների վիճակը: Դպրոցների վերանորոգման ժամանակ մարզադահլիճները դուրս են մնացել ծրագրից և խնդիր է առաջացել ամբողջությամբ վերանորոգել մարզադահլիճները, ձեռքբերել մարզական գույք: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մոտ 20 (քսան) մլն դրամ:

4. Փողոցների ասֆալտապատում:

Նախկինում Օձուն գյուղի փողոցների 50 %-ը՝ մոտ 18 կմ, ասֆալտապատ և բարեկարգ վիճակում էին: Քանի որ գյուղը տեղադրված է արևմուտքից արևելք ընկած թեքության վրա, այդ պատճառով անձրևաջրերի, սելավաջրերի ու կեղտաջրերի վերից վար հոսքը քայքայել և քշել – տարել է ասֆալտի ամբողջ ծածկույթը: Ներկայումս ամբողջությամբ քայքայված ու շարքից դուրս եկած է ասֆալտապատ ճանապարհահատվածը: Այս ծրագրի մի հատվածը՝ 135 (հարյուր երեսունհինգ) մլն դրամ գումարով ներկայացված է “Հազարամյակի մարտահրավեր” կազմակերպությանը: Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի մոտ 300 (երեք հարյուր) մլն դրամ:

5. Գյուղմթերքների վերամշակման արտադրամասերի հիմնում:

Խորհրդային ժամանակաշրջանում գյուղում կային գյուղմթերքների վերամշակման գործարաններ՝ պանրագործարան, պահածոների գործարան, չրերի արտադրամաս, որտեղ վերամշակվում էին թե Օձունի, թե շրջակա գյուղերի բնամթերքն ու գյուղմթերքը: Ներկայումս կա գյուղմթերքների իրացման խնդիր,

քանզի չեն գործում վերը նշված արտադրությունները: Գործարաններ հիմնելու համար անհրաժեշտ գումարները կկազմեն մոտ 50 (հիսուն) մլն դրամ:

6. Ոռոգման ցանցերի վերականգնում, ‘Եզնանիստ’ կոչվող վարելահողերի ջրամատակարարման ապահովում:

Ներկայումս Օձուն համայնքի ենթակայության վարելահողերի մոտ 60 %-ը ոռոգվում է, սակայն ներքին ցանցերը տեղ – տեղ վնասված են: Այստեղ հիմնական խնդիրը կապված է գյուղի հյուսիսային մասում գտնվող ‘Եզնանիստ’ կոչվող վարելահողերի հետ, որտեղ ներքին ցանցերը ամբողջությամբ վնասված են և պիտանի չեն շահագործման համար: Նախատեսվում է վերականգնել ամբողջ վնասված հատվածը՝ ջուրը հասցնել մինչև ‘Եզնանիստ’: Ծրագրի համար անհրաժեշտ կլինի 10 (տաս) մլն դրամ: Այս ծրագիրը նույնպես ներկայացված է ‘Հազարամյակի մարտահրավեր’ կազմակերպությանը:

7. Գյուղտեխնիկայի ձեռքբերում:

Գյուղում թիվ 1 գերխնդիրը հողերի մշակումն է: Սակայն առանց գյուղտեխնիկայի հնարավոր չէ պատկերացնել հողի մշակությունը: Իսկ մշակելու դեպքում էլ խնդիր է առաջանում բերքը ժամանակին հավաքել, տեղափոխել, իրացնել: Համայնքում օգտագործվում է հարևան համայնքներում եղած տեխնիկան: Նախատեսվում է ձեռք բերել վարող, ցանող, հնձող, կալսող մեքենաներ: Մոտ 150 մլն դրամը հազիվ կբավականացնի նշված տեխնիկան ձեռք բերելու համար: Մույն ծրագիրը կիրականացվի համայնքից դուրս գտնվող օձունցիների հովանավորությամբ:

1. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:

2008թ. Օձուն համայնքի բյուջեն կազմել է.

Եկամուտների գծով՝ 132.031.2 հզ դրամ
Ծախսերի գծով՝ 130.102.4 հզ դրամ
Ազատ մնացորդ՝ 1.925.800 հզ դրամ

2009թ. Օձուն համայնքի բյուջեն կազմել է.

Եկամուտների գծով՝ 118.031.1 հզ դրամ
Ծախսերի գծով՝ 116.531.1 հզ դրամ
Ազատ մնացորդ՝ 1.500 հզ դրամ

2010թ. Օձուն համայնքի բյուջեն կկազմի մոտավորապես՝
125 մլն դրամ

2011թ. Օձուն համայնքի բյուջեն կկազմի մոտավորապես՝
130 մլն դրամ

2012թ. Օձուն համայնքի բյուջեն կկազմի մոտավորապես՝
140 մլն դրամ